# Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի « Պարույր Սևակի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի, զինղեկի, հայոց լեզվի և գրականության, անգլերենի, ֆիզիկայի, ինֆորմատիկայի, ֆիզկուլտուրայի , կերպարվեստի, երաժշտության և շախմատի ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլում հարցաշարը կազմում էհաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում( Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը ( առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն( Ձև 5),

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր ( առկայության դեպքում),

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձվում են: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման շամկետի ավարտը վերացնել կամ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ. հոկտեմբերի 10-ից հոկտեմբերի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10⁰⁰- 15⁰⁰-ը, բացի շաբաթ և կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 29-ին, ժամը՝14-⁰⁰-ին, ՀՀ Արարատի մարզի Պարույր Սևակի հիմնական դպրոցում, հասցեն՝ գ. Տիգրանաշեն, 7-րդ փողոց:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 094-50-77-66 հեռախոսահամարով: